



## ՆՆՋՈՒՄՆ Ի ՏԵՐ ՏԵՂԱՊԱՀ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ

### Յաւ ի սիրտ ընթերցանք Փր-ՆՂԷ մէջ, զի

Գժնդակ հիւանդութիւն մը՝ որ ամսոյս 2 ին յանկարծ ծանրացաւ Պատրիարքական Տեղապահ Ազատեան Գերապատիւ Տ. Նիկողայոս Ս. Արքեպիսկոպոսի վրայ, մարդկային ամեն հնար ու ճարտարութիւն ի դերել հասնելով՝ վախճան տուաւ Նորին Սրբազնութեան կենաց, ամսոյս (Փետրվար) 10 ին կիրակէ առաւրդի զիշեր ժամը 8 ին:

Երէկ (Փետր, 12) յուղարկութեան հանդէսը կատարուեցաւ մեծ շրով: Գերապատիւ Տ. Մամբրէ Եպիսկոպոս յատկապէս Ս. Պատարագ մատոյց Օրթագիւղի եկեղեցւոյն մէջ, ուր ներկայ էին մեր ազգային ամեն աստիճանի բազմաթիւ կղերականներէն՝ Գաղարքական Ժողովոյ անդամներէն եւ 3000 ի չափ ժողովրդէնէ զատ՝ Ասորոց գերապատիւ Կաթողիկոսն երկու վարդապետաց հետ, Յունաց Պատրիարքական գերապատիւ փոխանորդն, քանի մը Յոյն կղերականօք եւ Գափու քահանային: Օժման արարողութիւնը կատարեցին Վարժապետեան Տ. Ներսէս, Տ. Թադէոս եւ Տ. Գրիգոր գերապատիւ Արքեպիսկոպոսներ: Մամբրէ Սրբազան խօսեցաւ նա եւ դամբանական մը:

Դազաղը՝ Օրթագիւղի եկեղեցիէն Գուրուշէժմէի եկեղեցին փոխադրեցաւ շքեղ Թափորով: Առջեւէն կերթային ոստիկանք, մեր՝ Յունաց՝ Պուլլարաց ու Հրէից եասագծիները, քէլեանները, Գափու քահանայները. ատենց ետեւէն՝ երգեցիկ մանկտին, քահանայական դասն ու վարդապետք. դազաղն կզտնուէր յետոյ՝ ձեռաց վրայ բարձեալ, ինչպէս նաեւ ձեռաց վրայ էին հանգուցելոյն շքանշաններն. դազաղին շուրջն առած էին դարձեալ եկեղեցականք, եւ ետին կզտնուէին արքեպիսկոպոսունք, Ասորոց կաթողիկոսն, Յունաց Պատրիարքական փոխանորդն: — Օրթագիւղէն մինչեւ Գուրուշէժմէ բազմութեամբ լցուած էին փողոցները: Եկեղեցական տխուր երգովք հասաւ Թափորն Գուրուշէժմէի եկեղեցին: Անդ, Նարայէյեան գերապատիւ Տ. Խորէն Ս. Արքեպիսկոպոս ալ ազգու դամբանական մը խօսեցաւ, որ մեծ տպաւորութիւն ըրաւ ներկայ եղողներուն վրայ: Այնուհետեւ մարմինը ամփոփեցաւ եկեղեցւոյն բակը՝ Բ. Դրնէն սպասուած հրամանը նոյն պահուն հասնելով:

Կրկնութիւն չընելու համար՝ զանց կընեմք վախճանեալ Սրբազանին կենսագրութիւնը: Երբ պատրիարքական տեղապահ ընտրուեցաւ, բաւական տեղեկութիւն տուինք նորա ազգային կենաց ու պաշտօնավարութեանց վրայ: Այս անգամ կյանքունք միայն ըսել, Թէ 21 շ ամսոյ չափ ժամանակ վարեց վերջին պաշտօնը, եւ այս պաշտօնավարութեան առթիւ իրեն շնորհուած երկրորդ աստիճանի պատուանշանը զժաղաղաբար յուղարկութեան օրը տեսնուեցաւ: Տարածամբ եւ զժաղաղ վախճան, որ առհասարակ ամենուն վրայ տխուր տպաւորութիւն կընէ:

Այսպէս ի ժամու եւ ի տարածամու պիտի թողուր զաշխարհ՝ կայսր, Թագաւոր, իշխան, պատրիարք, եպիսկոպոս, հարուստ, ազքատ, եւ ամեն աստիճանի ու կարգի մարդիկ: Երանի անոր, որ աշխարհի մէջ բարձի՝ պատուոյ ու փառաց՝ վերջապէս հանրական պաշտօնի մը բարձրացած ատեն, մահն միշտ առաջի աչաց ունելով՝ իր անունն ու յիշատակն անմահացունելու գործեր կզործէ, որոնք միայն դարուց ի դարս կման, եւ որոց քով ոչ ինչ են մարմարիոնեայ կոթողներ, ոսկի արձաններ ու ամենաշքեղ Թափորներ ու հանդէսներ:

Ղուսաւորեսցէ Տէր զՀոգի Հանգուցելոյն, և ընդ սիրելիս Անուան Իւրոյ դասեցէ: